

**ՇՆՈՐՀԱՆԴԷՄ**  
**«ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐՈՒ**  
**ԽՄՔԱԻՈՐՈՒՄԸ» ԳԻՐՔԻՆ**

Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութեամբ եւ կազմակերպութեամբ Լոս Անճելըսի Գալիֆորնիա Համալսարանի (UCLA) Հայագիտական Ուսմանց Կեդրոնի եւ Փաստփնայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Սարգիս Աւագ Քինյ. Փեթոյեանի եւ Ծխական Խորհուրդի, Մարտ 23ի երեկոյեան ժամը 7:30ին Եկեղեցւոյ Սրահին մէջ տեղի ունեցաւ նոյն եկեղեցւոյ մէջ երկար տարիներու նուիրեալ ծառայութիւն մատուցող Բրշ. Գեորգ Աւագ Սրկ. Փանոյեանի նոր հրատարակուած «*Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Շարականներու Եղանակներու Խմբաւորումը*» գիրքին շնորհանդէսը

Գիրքը հանգամանօրէն ներկայացուց Դուկտ. Արժ. Տ. Ջաւէն Աւագ Քինյ. Արզումանեան՝ վեր առնելով հեղինակին հմտութիւնը հայ շարականներու եւ անոնց եղանակներու: Տէր Հայրը իր խօսքին մէջ յատկապէս շնորհաւորեց զինք Առաջնորդ Սրբազան Հօր անունով եւ բարեմաղթութիւններ կատարեց:

Առ ի գիտութիւն, յիշեալ գիրքին մէջ Սրբազան Հայրը իր շնորհաւորական խօսքին մէջ կ'ըսէր. «Ձեր պատրաստած «*Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Շարականներու Եղանակներու Խմբաւորումը*» խորագիրը կրող Ա. Հատորը ուշադրութեամբ աչքէ անցուցինք, ուր մասնագիտական բացատրութիւններ կու տաք՝ տարբեր ժամանակներու ականաւոր հեղինակներուն կարծիքները արձանագրելով: Այնուհետեւ գիրքի Բ. Մասին մէջ կը խօսիք «*Շարականներու Եղանակներու Խմբաւորում*»ի մասին յայտնելով, որ բոլոր շարականներուն խմբաւորման փորձը պիտի սկսիք Մեսրոպ Մաշտոցի Ապաշխարութեան շարականներով: Ուսումնասիրութեան մէջ յատուկ տեղ կը գրաւեն նաեւ եւրոպական նօթագրութեամբ տպուած շարականներ: Օգտագործած էք բաւական հարուստ եւ ճոխ գրականութիւն:

Կը շնորհաւորենք ձեզ եւ կ'աղօթենք Բարձրեալն Աստուծոյ, որ ձեզի առաւել ոյժ եւ կարողութիւն պարգեւէ, որպէսզի նմանօրինակ աշխատութիւններով օգտակար հանդիսանայիք Հայց. Առաքելական Եկեղեցւոյ եւ Արեւմտեան Թեմին:»:

Կարճ խօսքերով հանդէս եկան Գեորգ. Տ. Եփրեմ Սրբ. Թապագեան, Արժ. Տ. Սարգիս Աւագ Քինյ. Փեթոյեան եւ Բրշ. Դուկտ. Հրայր Սրկ. Տէքմէճեան՝ USC-ի անունով: Դպրաց Դասի անդամներէն՝ Յակոբ Սրկ. Կակոսեան մի քանի շարականներ երգեց: Ապա անոնց մասնակցութեամբ կատարուեցաւ գիրքին զինեծօնը:

Հանդիսավար՝ Բրշ. Վահէ Սրկ. Չարխուտեան ուրախութեամբ հանդիսականներուն ծանօթացուց Բրշ. Գեորգ Աւագ Սրկ. Փանոյեանը, որ իր խորին երախտագիտութիւնը յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր, Եփրեմ Սրբազանին, Տէր Ջաւէնին, Տէր Սարգիսին եւ յայտագրի մաս կազմողներուն եւ կազմակերպիչ յանձնախումբին (USC-ի), որուն յաջորդեց գեղարուեստական յայտագիր:

Ձեռնարկի աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն: Հանդիսականները մօտենալով անձամբ շնորհաւորեցին Բրշ. Գեորգ Աւագ Սրկ. Փանոյեանը եւ իրենց բարեմաղթութիւնները յայտնեցին անոր: